Կ Ա Ր Գ

ՔՆՆԱՍԵՆՅԱԿՈՒՄ ԱՎԱՐՏԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅԱՆ ԱՆՑԿԱՑՄԱՆ

(ընթերցվում է շրջանավարտների համար)

Հարգելի՛ շրջանավարտներ

1. Ուշադիր ստուգեք քննական թեստը և պատասխանների ձևաթուղթը. եթե դրանցում կան պակասող, պատռված էջեր կամ անընթեռնելի հատվածներ, դիմեք մեզ:
2. Քննական թեստը պարունակում է ընտրովի պատասխաններով 50 առաջադրանք: Յուրաքանչյուր առաջադրանքի համար տրված է պատասխանի 4-ական տարբերակ: Պատասխանի տրված տարբերակներից միայն մեկն է ճիշտ:
3. Հարգելի 12-րդ դասարանցիներ: Թեստ-գրքույկը չի ստուգվում: Լսեք և մտապահեք պատասխանների ձևաթղթի լրացման կարգը: Պատասխանների ձևաթղթի ճիշտ լրացումից է նաև կախված ձեր քննական միավորը: Պատասխանները նշելու համար նախատեսված վանդակները դասավորված են հորիզոնական կարգով՝ ըստ թեստի առաջադրանքների համարների (Հայոց լեզու և հայ գրականություն՝ Ա1,Ա2…, մաթեմատիկա և օտար լեզու՝ Ա1.1, Ա1.2 ...) և յուրաքանչյուրի տակ տեղավորված են չորսական վանդակներից բաղկացած սյուներ: Յուրաքանչյուր առաջադրանք կատարելուց հետո ձեր ընտրած պատասխանի համարի դիմացի վանդակում դրեք «X» նշանը (նշելու ձևը կա պատասխանների ձևաթղթում): Չի թույլատրվում անել այլ տիպի նշում կամ օգտագործել հաստ, ընդհատ հետքեր թողնող գրիչ:
4. Եթե չգիտեք առաջադրանքի ճիշտ պատասխանը կամ չեք կարողանում անմիջապես կողմնորոշվել, ապա ժամանակի խնայողության նպատակով կարող եք այն բաց թողնել և անցնել հաջորդին: Բաց թողնված առաջադրանքին կարելի է անդրադառնալ մյուս առաջադրանքները կատարելուց հետո՝ ժամանակ ունենալու դեպքում: Եթե ուզում եք փոխել որևէ առաջադրանքի պատասխանը, ապա պատասխանների ձևաթղթի սխալ նշված պատասխանները փոխելու համար հատկացված տեղում գրեք առաջադրանքի համարը (օրինակ Ա-ն գրված է, գրեք 1 կամ 1.1) և կատարեք նոր նշումը: Որպես վերջնական պատասխան է ընդունվում վերջին նշումը: Առաջադրանքների համար ստացված միավորները գումարվելու են: Այդ պատճառով անհրաժեշտ է կատարել հնարավորինս շատ առաջադրանքներ:

5. Չի թույլատրվում՝

   1) ձևաթղթի տպագրված տեքստի վրա, մաքուր մասերում (վանդակներից դուրս) նշումներ և ուղղումներ կատարել,

2) հարցեր տալ թեստի կառուցվածքի վերաբերյալ,
3) կազմակերպիչներին դիմել առանց ձեռք բարձրացնելու և տեղից կանգնելու:

6. Ուշադրություն.
   1) Կազմակերպչի կողմից երկրորդ անգամ քննության կարգի խախտման մասին զգուշացվելուց հետո կհեռացվեք քննությունից: Քննության կարգը խախտված է համարվում հետևյալ դեպքերում.
   ա. աշխատանքային սեղանին օժանդակ նյութերի, ավելորդ իրերի առկայություն,
   բ. տեղը փոխել, առանց թույլատրության տեղից վեր կենալ,
   գ. հուշել, արտագրել, ծածկագրից օգտվել, թեստը փոխանակել,
   դ. խոսել, աղմկել:
   2) Վատ զգալու, առողջական խնդիրներ ունենալու և այլ պատճառներով քննասենյակից դուրս գալու անհրաժեշտության դեպքում ձեռք բարձրացրեք և դիմեք պատասխանատու կազմակերպչին:
   3) Քննության կարգի խախտման դեպքում, եթե դա առաջադրանքների ոչ լիարժեք կատարման պատճառ է դարձել, կարող եք բողոք-դիմում գրել քննության պահին կամ մինչև քննասենյակից դուրս գալը:
7. Քննության համար նախատեսված ժամանակի ավարտին քննասենյակի պատասխանատու կազմակերպչի թույլտվությամբ պետք է մոտենաք խմբի կազմակերպչին, հանձնեք քննական թեստը և ստորագրեք խմբի շրջանավարտների ցուցակի համապատասխան տեղում:
8. Քննական աշխատանքը սահմանված ժամանակից շուտ ավարտելու դեպքում պետք է նույն ձևով հանձնել քննական նյութերը և դուրս գալ քննասենյակից:

Հաջողություն ձեզ

/Հայտարարվում է քննության սկիզբը, իսկ տևողությունը և ավարտը նշվում է գրատախտակին/: